«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2

ք. Երևան «04» սեպտեմբեր 2020թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտորի պարտականությունները կատարող, պրոռեկտոր՝ Ռ.Աղգաշյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Բեսթ Բիլդինգ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90 օրացույցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**[27]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N2.1 Հավելվածում:

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __10___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 30,479,500 (Երեսուն միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որից 5,079,920 (հինգ միլիոն յոթանասունինը հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ

որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է __16__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ | «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 | Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5 |
| Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ | Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 11800109943100 | Հ/Հ 220453331401000 |
| ՀՎՀՀ 01504054 | ՀՎՀՀ 02266584 |
| Ռեկտորի պ/կ | |
| պրոռեկտոր ---------- Ռ. Աղաջյան | Տնօրեն ---------- Վ. Հարությունյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
« 04 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## Թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքների կատարման

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի ընդհանուր արժեքը հազ. դրամ | Ընդհանուր արժեքը հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **Մասնաշենք 5, 3-րդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգում** | | | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Միջնորմների քանդում բլոկներից, δ=100մմ | մ² | 53.3 | 0.8 | 42.64 |
| 2 | Ալյումինե դռների ապամոնտաժում | մ² | 16.7 | 4 | 66.8 |
| 3 | Փայտե դռների ապամոնտաժում | մ² | 25.7 | 1.2 | 30.84 |
| 4 | Պլաստմասե պատուհանագոգերի ապամոնտաժում | մ² | 7.0 | 1 | 7 |
| 5 | Թղթե պաստառի քերում պատերից | մ² | 47.5 | 0.07 | 3.325 |
| 6 | Սոսնձաներկի մաքրում պատերից | մ² | 513.8 | 0.25 | 128.45 |
| 7 | Յուղաներկի մաքրում պատերից | մ² | 336.2 | 0.25 | 84.05 |
| 8 | Լինոլեումից հատակի քանդում | մ² | 35.3 | 0.14 | 4.942 |
| 9 | Մանրահատակի քանդում | մ² | 3.2 | 0.5 | 1.6 |
| 10 | Հատակների ցեմենտավազե հարթաշերտի քանդում h=50մմ | մ² | 3.2 | 0.6 | 1.92 |
| 11 | Կախովի առաստաղի քանդում | մ² | 106.1 | 0.6 | 63.66 |
| 12 | Թուջե մարտկոցների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին | հատ | 311 | 1 | 311 |
| 13 | d=159մմ պողպատե խողովակների ապամոնտաժում | գմ | 35.0 | 1 | 35 |
| 14 | d=102մմ պողպատե խողովակների ապամոնտաժում | գմ | 20.0 | 1 | 20 |
| 15 | Մ25մմ խողովակների ապամոնտաժում | գմ | 189.0 | 0.3 | 56.7 |
| 16 | Մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում, հանձնում պատվիրատուին | գմ | 9.6 | 0.5 | 4.8 |
| 17 | Լուսատուների ապամոնտաժում | հատ | 70 | 0.3 | 21 |
| 18 | Հեռախոսալարերի ապամոնտաժում | գմ | 80.0 | 0.1 | 8 |
| 19 | Շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 15կմ | տ | 18.3 | 4 | 73.2 |
| | Ընդամենը | | | | 964.927<br>3.16% |
| | **Կառուցողական աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 10սմ հաստությամբ | մ² | 8.0 | 3 | 24 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Բլոկերի դատարկությունների լցում ցեմենտ-ավազային շաղախով | մ³ | 0.12 | 40 | 4.8 |
| 3 | Ամրան Հ10А500С | տ | 0.01 | 420 | 4.2 |
| 4 | Ալյումինե վիտրաժ բացվող* | մ² | 6.9 | 70 | 483 |
| 5 | Ալյումինե վիտրաժ չբացվող* | մ² | 9.8 | 40 | 392 |
| 6 | Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլ արտերկիր կամ համարժեք* | մ² | 20.0 | 43 | 860 |
| 7 | Հակահրդեհային արկղի մետաղապլաստե դռնակի տեղադրում | մ² | 0.9 | 35 | 31.5 |
| 8 | Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 15սմ լայնությամբ | մ² | 9.3 | 1 | 9.3 |
| 9 | Պլաստմասե պատուհանագոգի արժեքը,b=15սմ | գմ | 62.0 | 1.5 | 93 |
| 10 | Գլանավարագույրների տեղադրում* | մ² | 111.4 | 11.5 | 1281.1 |
| 11 | Գիպսաստվարաթղթե սալերով պատերի պատրաստում մետաղական հիմնակմախքով | մ² | 5.3 | 5.5 | 29.15 |
| 12 | Պատերի գաջե սվաղում բարձր որակի | մ² | 8.0 | 3 | 24 |
| 13 | Պատերի քսահարթում գիպսոնիտով | մ² | 177.9 | 1 | 177.9 |
| 14 | Պատերի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ | մ² | 895.4 | 1.5 | 1343.1 |
| 15 | Կախովի առաստաղի պատրաստում գիպսաստվարաթղթե սալերից, մետաղական հիմնակմախքով 9.5մմ հաստ. | մ² | 457.5 | 4.5 | 2058.75 |
| 16 | Կախովի առաստաղի պատրաստում 'Արմստրոնգ' տիպի, մետաղական հիմնակմախքով | մ² | 109.3 | 8 | 874.4 |
| 17 | Առաստաղի ներկում լատեքսային ներկով բարձր որակի՝ ծեփամածիկմամբ | մ² | 457.5 | 1.5 | 686.25 |
| 18 | Մանրահատակի հղկում | մ² | 108.1 | 1 | 108.1 |
| 19 | Մանրահատակի վերանորոգում (1տեղը մինչև 0.5մմ) | տեղ | 24 | 3 | 72 |
| 20 | Լամինատե հատակի պատրաստում 12մմ /արտերկրյա կամ համարժեք, ներառյալ սպունգը եւ շրիշակները/* | մ² | 457.5 | 9 | 4117.5 |
| 21 | Պրեսգրանիտե 60x60 սալերով հատակների իրականացում* | մ² | 109.3 | 12 | 1311.6 |
| 22 | Պրեսգրանիտե շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ | գմ | 74.8 | 1.5 | 112.2 |
| 23 | Օդափոխության ցանցերի մոնտաժում D=100մմ | հատ | 23 | 2.8 | 64.4 |
| 24 | Օդի լավորակիչ 2 մոդուլով և կառավարման վահանակով, պատին ամրացվող, սպլիտ համակարգ Royal Clima RC-G22HN, սերիա Grazia SME -07A/SUE-07A; 2.2Կվտ հզորությամբ, ձեռքի վահանակով* | հատ | 9 | 225 | 2025 |
| 25 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում | էքմ | 102.7 | 0.6 | 61.62 |
| 26 | Ջեռուցման ալյումինե մարտկոցների արժեքը* | սեկ-ցիա | 311 | 5 | 1555 |
| 27 | Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX խողովակներից Φ25մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 54.0 | 2.5 | 135 |
| 28 | Խողովակաշարի անցկացում PPr-Al-PEX խողովակներից Φ32մմ, հիդրավլիկ փորձարկումով | գմ | 135.0 | 2.7 | 364.5 |
| 29 | de32xde25 արտաքին պարուրակով պոլիպրոպիլենե անցումի մոնտաժում /ամերիկանկա/ | հատ | 54 | 2.5 | 135 |
| 30 | de32xde25 պոլիպրոպիլենե անցումի մոնտաժում | հատ | 54 | 0.1 | 5.4 |
| 31 | de32, α=90՝ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում | հատ | 27 | 0.1 | 2.7 |
| 32 | de25, α=90՝ պոլիպրոպիլենե արմունկի մոնտաժում | հատ | 27 | 0.1 | 2.7 |
| 33 | de32, պոլիպրոպիլենե կցորդիչի մոնտաժում | հատ | 27 | 0.1 | 2.7 |
| 34 | de32xde20 պոլիպրոպիլենե անցումային եռաբաշխիչի մոնտաժում | հատ | 27 | 0.2 | 5.4 |
| 35 | de32 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում | հատ | 82 | 0.1 | 8.2 |
| 36 | de25 խողովակների պատերին ամրացման խամութների մոնտաժում | հատ | 54 | 0.03 | 1.62 |
| 37 | Մարտկոցի օդահեռացման փականներ Φ15մմ | հատ | 27 | 2 | 54 |
| 38 | Φ150 պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժում, փորձարկումով | գմ | 35.0 | 2.2 | 77 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 39 | Φ100 պոլիվինիլքլորիդե խողովակների մոնտաժում, փորձարկումով | գմ | 20.0 | 2 | 40 |
| 40 | Մետաղական պահարան 600x800x250* | հատ | 1 | 61 | 61 |
| 41 | Վահանակ 8 մոդուլի համար, Legrand 601245 մակնիշի կամ համարժեք* | հատ | 7 | 13 | 91 |
| 42 | Վահանակ 6 մոդուլի համար, Legrand 001306 մակնիշի կամ համարժեք | հատ | 1 | 10 | 10 |
| 43 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 100Ա, 27028 Legrand DRX125 մակնիշի կամ համարժեք* | հատ | 1 | 24 | 24 |
| 44 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 63Ա, Legrand մակնիշի կամ համարժեք* | հատ | 8 | 17 | 136 |
| 45 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 40Ա, Legrand մակնիշի կամ համարժեք* | հատ | 8 | 9.8 | 78.4 |
| 46 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B32Ա, Legrand 403975 մակնիշի կամ համարժեք* | հատ | 8 | 4.5 | 36 |
| 47 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B25Ա, Legrand 403974 մակնիշի կամ համարժեք* | հատ | 24 | 4.3 | 103.2 |
| 48 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B10Ա, Legrand 403970 մակնիշի կամ համարժեք* | հատ | 8 | 3 | 24 |
| 49 | Լուսատու առաստաղային LED, 600x600 | հատ | 38 | 10 | 380 |
| 50 | Լուսատու առաստաղային 40վտ LED, 1200մմ | հատ | 42 | 10 | 420 |
| 51 | Ակոսների փորում պատերում | գմ | 140.0 | 0.3 | 42 |
| 52 | Սակառի մոնտաժում 60x80մմ | գմ | 2 | 1 | 2 |
| 53 | Սակառի մոնտաժում 16x16մմ | գմ | 20.0 | 0.7 | 14 |
| 54 | Տուփեր ճյուղավորման | հատ | 8 | 0.1 | 0.8 |
| 55 | Տուփեր վարդակների և անջատիչների տեղադրման համար | հատ | 9 | 0.1 | 0.9 |
| 56 | Տուփեր երկտեղանոց վարդակների և անջատիչների տեղադրման համար | հատ | 55 | 0.2 | 11 |
| 57 | Երեսկալ 2 տեղանոց վարդակների համար | հատ | 55 | 0.5 | 27.5 |
| 58 | Մալուխ պղնձե ջիղերով 4x10մմ2 | գմ | 8.0 | 3 | 24 |
| 59 | Մալուխ պղնձե ջիղերով 5x4մմ2 | գմ | 130.0 | 1.5 | 195 |
| 60 | Հաղորդալար պղնձե ՈՊՎ 3x2.5մմ2 | գմ | 300.0 | 0.6 | 180 |
| 61 | Հաղորդալար պղնձե ՈՊՎ 3x1.5մմ2 | գմ | 180.0 | 0.5 | 90 |
| 62 | Ճկախողովակ PVC Φ20մմ | գմ | 300.0 | 0.3 | 90 |
| 63 | Հատակային մոդուլային տուփ կոմպլեկտավորված վարդակ հողանցիչով և LAN բնիկով, 8տեղանոց | հատ | 16 | 27 | 432 |
| 64 | Հատակային մոդուլային տուփ կոմպլեկտավորված վարդակ հողանցիչով և LAN բնիկով, 6տեղանոց | հատ | 15 | 22 | 330 |
| 65 | Վարդակ երկբևեռ հողանցիչով | հատ | 102 | 1.1 | 112.2 |
| 66 | Վարդակ հողանցիչով դին ամրացմամբ | հատ | 2 | 1.9 | 3.8 |
| 67 | Անջատիչ երկստեղնավոր | հատ | 9 | 1.8 | 16.2 |
| 68 | Պղնձե ծայրակալ 10մմ կտրվածքով մալուխի համար | հատ | 10 | 0.3 | 3 |
| 69 | Մետաղական պահարանի և վահանակների համար խոռոչների քանդում | $մ^3$ | 0.2 | 12 | 2.4 |
| | Ընդամենը | | | | 21578.49<br>70.67% |
| | **Հեռախոսային ցանց** | | | | |
| 1 | Հեռախոսային վարդակ, Titan մակնիշի կամ համարժեք* | հատ | 7 | 1.7 | 11.9 |
| 2 | Մալուխ, FTP5e | գմ | 80.0 | 0.35 | 28 |
| | Ընդամենը | | | | 39.9<br>0.13% |
| | **Համակարգչային ցանց** | | | | |
| 1 | Համակարգչային վարդակ, Titan կամ համարժեք | հատ | 9 | 8.1 | 72.9 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Մալուխ, UTP5e | գմ | 240.0 | 0.37 | 88.8 |
| | Ընդամենը | | | | 161.7<br>0.53% |
| **Ընդամենը /առանց սարքավորումների/** | | | | | 20,720.02 |
| **Շահույթ, 11%** | | | | | 2,279.20 |
| **Ընդամենը** | | | | | 22,999.22 |
| **Սարքավորումներ** | | | | | 2,025.00 |
| **Ընդամենը** | | | | | 25,024.22 |
| **Չնախատեսված ծախսեր 1.5%** | | | | | 375.36 |
| **Ընդամենը** | | | | | 25,399.583 |
| **ԱԱՀ, 20%** | | | | | 5,079.92 |
| **Ընդամենը** | | | | | 30,479.50 |

*Հավելված 1.1 –ում ներկայացված է պահանջվող աշխատանքների իրականացման համար օգտագործվող ապրանքների և սարքերի տեխնիկական բնութագրերը

** Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Տերյան 105 հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ
պրոռեկտոր ---------- Ռ. Աղցաշյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453331401000
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ
« 04 » սեպտեմբեր 2020թ. կնքվ
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագ

Տեխնիկական բնութագրեր

| NN | Տեխնիկական բնութագիր | |
|---|---|---|
| 4 | Բլոկով 60մմ հաստությամբ, ջերմակամուրջով, ապակեփաթեթով՝ 4x4մմ, պրոֆիլ՝ Պրոֆալ կամ համարժեք գույնը՝ արծաթագույն | Ալյումինե բլոկով 60մմ հաստությամբ, ջերմակամուրջով, ապակեփաթեթով՝ 4x4մմ, պրոֆիլ՝ SARAY գույնը՝ արծաթագույն<br>**Բեսթ Բիլդինգ** |
| 5 | Ալյումինե, բլոկով 60մմ հաստությամբ, ջերմակամուրջով, ապակեփաթեթով, 4x4մմ, պրոֆիլ՝ ՝ Պրոֆալ կամ համարժեք գույնը՝ արծաթագույն | Ալյումինե, բլոկով 60մմ հաստությամբ, ջերմակամուրջով, ապակեփաթեթով, 4x4մմ, պրոֆիլ՝ SARAY գույնը՝ արծաթագույն<br>**Բեսթ Բիլդինգ** |
| 6 | Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլը որակյալ<br>Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստությամբ պրոֆիլներից խուլ դռներ, միջնամասը՝ լամինատ կամ ՄԴՖ, /պրոֆիլ՝ որակյալ, բազմախոռոչ / բռնակը, սարքերը, կողպեքները որակյալ | Մետաղապլաստե դռների տեղադրում /ներառյալ սարքերը, կողպեքները/, պրոֆիլը որակյալ<br>Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստությամբ պրոֆիլներից խուլ դռներ, միջնամասը՝ լամինատ կամ ՄԴՖ, /պրոֆիլ՝ որակյալ, բազմախոռոչ / բռնակը, սարքերը, կողպեքները որակյալ<br>**Բեսթ Բիլդինգ** |
| 10 | Չթափանցող գլանավարագույրների տեղադրում, հաստ գործվացքով, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ | Չթափանցող գլանավարագույրների տեղադրում, հաստ գործվացքով, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>**Բեսթ Բիլդինգ** |
| 20 | Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/<br>12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ | Լամինատե հատակի պատրաստում, հաստությունը՝ 12մմ /ներառյալ սպունգը եւ շրիշակները/<br>12մմ, Խոնավադիմացկուն և ջրակայուն 33 կարգի,/գույնը և տեսքը համաձայնացնել պատվիրատուի հետ<br>**Kastamonu**<br>**AGT** |
| 21 | Պրեսգրանիտե 60x60 սալերով հատակների իրականացում Որակյալ, չսահող, եվրոպական արտադրության կամ համարժեք, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ | Պրեսգրանիտե 60x60 սալերով հատակների իրականացում Որակյալ, չսահող, գույնը և տեսքը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>**Imex-Tile**<br>**Pars TILE**<br>**Pamesa Ceramica** |
| 24 | Օդորակիչ ինվերտորային սպլիտ համակարգով18000 BTU,աշխատանքային ռեժիմը՝ տաքացում և հովացում -15-ից +43 ջերմաստիճանի միջակայքում: 2,2կվ հզորությամբ բարձր որակի: 3տարվա երաշխիքային սպասարկմամբ: | Օդորակիչ ինվերտորային սպլիտ համակարգով18000 BTU,աշխատանքային ռեժիմը՝ տաքացում և հովացում -15-ից +43 ջերմաստիճանի միջակայքում: 2,2կվ հզորությամբ բարձր որակի:<br>**Berg**<br>**Gree** |
| 26 | Ջեռուցման ալյումինե մարտկոց, աշխատանքային ճնշումը 9 BAR-ից ոչ պակաս, չափերը՝ յուրաքանչյուր տուփում 10 սեկցիա, ընդհանուր չափը ոչ պակաս 80.3 x 8.5 x 59 սմ, 10- սեկցիայի ընդհանուր քաշը՝ ոչ պակաս 10կգ-ից: Ջեռուցման ալյումինե մարտկոցի մոնտաժման կոմպլեկտով, հավաքածու՝ Կայդո կամ համարժեք: | Ջեռուցման ալյումինե մարտկոց, աշխատանքային ճնշումը 9 BAR-ից ոչ պակաս, չափերը՝ յուրաքանչյուր տուփում 10 սեկցիա, ընդհանուր չափը ոչ պակաս 80.3 x 8.5 x 59 սմ, 10- սեկցիայի ընդհանուր քաշը՝ ոչ պակաս 10կգ-ից:<br>Կայդո |
| 41 | ավտոմատ անջատիչի տուփ 8 տեղ մոնտաժում,դին տիպի ավտոմատ անջատիչների համար ներքին տեղադրմամբ | ավտոմատ անջատիչի տուփ 8 տեղ, դին տիպի ամրացմամբ<br>Էլեկտրիկա |
| 42 | ավտոմատ անջատիչի տուփ 6 տեղ մոնտաժում,դին տիպի ավտոմատ անջատիչների համար ներքին տեղադրմամբ | ավտոմատ անջատիչի տուփ 6 տեղ,դին տիպի ամրացմամբ<br>Էլեկտրիկա |
| 43 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 100Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 100Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF |
| 44 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 63Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 63Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF ՌԴ |
| 45 | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 40Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ եռաբևեռ 40Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF ՌԴ |
| 46 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B32Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B32Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF ՌԴ |
| 47 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B25Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B25Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF ՌԴ |
| 48 | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B10Ա մոնտաժում, դին տիպի ամրացմամբ եվրոպական արտադրության կամ համարժեք բարձր որակի | Անջատիչ-բաժանիչ միաբևեռ B10Ա, դին տիպի ամրացմամբ<br>EKF ՌԴ |

| | | |
|---|---|---|
| 49 | Լուսատու առաստաղային LED, 600x600մմ մոնտաժում,40 վտ հզորությամբ 6500կլ երաշխիքով | Լուսատու առաստաղային LED, 600x600մմ մոնտաժում,40 վտ հզորությամբ 6500կլ, երաշխիքով<br>electrica<br>super lexplus |
| 50 | Լուսատու առաստաղային 40վտ LED, 1200մմ 6500կլ մոնտաժում | Լուսատու առաստաղային 40վտ LED, 1200մմ 6500կլ<br>super lexplus |
| 1 | Հեռախոսային վարդակ արտաքին տեղադրման | արտաքին տեղադրման ALDO |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ
պրոռեկտոր ---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453331401000
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ
« 04 » սեպտեմբեր 2020թ. կնքվ
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագ

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

**Թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքների կատարման**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Շին.մոնտաժային աշխատանքների նախապատրաստման աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 5 օրացույցային օրվա ընթացքում |
| 2 | Քանդման աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 13 օրացույցային օրվա ընթացքում |
| 3 | Կառուցման աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 83 օրացույցային օրվա ընթացքում |
| 4 | Հայտնաբերված թերությունների վերացման, տարածքի մաքրման աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 83 օրացույցային օրվա ընթացքում |
| 5 | Անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստում, շահագործման հանձնում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 90 օրացույցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից | 90 օրացույցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ
պրոռեկտոր ---------- Դ. Աղաջյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453331401000
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ
«04» սեպտեմբեր 2020թ. կնքվ
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով պայմանագ

**Թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքների կատարման**

| Չ/Բ համարը | Նյութերի տեսակները | Երաշխիքային նվազագույն ժամկետը (տարի) |
|---|---|---|
| **Չափաբաժին** 1<br>թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքներ | Ապակի | 5 |
| | Մետաղապլաստ | 10 |
| | Հատակներ և դրանց առանձին նյութեր և շինվածքներ | 10 |
| | Գաջ | 20 |
| | Ցեմենտ | 20 |
| | Ավազ | 20 |
| | Երեսապատման սալեր | 10 |
| | Մալուխ | 25 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ
պրոռեկտոր ---------- Ռ.Աղգաշյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453331401000
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
« 04 » սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100 | թիվ 5 մասնաշենքի երրորդ հարկի միջանցքի և լսարանների վերանորոգման աշխատանքներ | | | **9.448.645** | **30.479.500** | **30.479.500** | **30.479.500** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11800109943100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտորի պ/կ
պրոռեկտոր ---------- Ռ.Սողոմոնյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Կողբի 1 փողոց, 5
Բանկ՝«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453331401000
ՀՎՀՀ 02266584

Տնօրեն ---------- Վ. Հարությունյան
(ստորագրություն) Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«04» սեպտեմբեր 2020թ. կնքված*
*ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
«04» սեպտեմբեր 2020թ. կնքված
ՀԱՊՀ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն